

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY
ФИЛОЛОГИЯ

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

DOI:10.57155/KACQ8679

ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԵՐԻ ՆԱԽԱԶԶԵՌՆԱԾ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Գրիգոր Բ. Վկայասեր, Կիրակոս Դրազարկեցի, Բյուզանդական կայսրություն, Կիլիկիա, Կոստանդնուպոլիս, եկեղեցական փոխհարաբերություններ, Սև լեռան վանքեր, թարգմանական գործունեություն, կրթական կենտրոններ:

Սև լեռան վանքերը¹ միջնադարում հանդիսացել են վանականության բազմամշակութային կենտրոններ², որտեղ բեղուն մատենագրական գործունեու-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., gevorgyan.davit94@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 3, 2022, գրախոսելու օրը՝ մայիսի 5, 2022:

¹ Սև լեռան հայկական վանքերի տեղադրությունը հստակ չէ: Պատմաաշխարհագրական բնույթի հարցերի վերաբերյալ տե՛ս **J. Weitenberg**, “The Armenian Monasteries in the Black Mountain”, *East and West in the Medieval Eastern Mediterranean, I, Antioch from the Byzantine reconquest until the end of the crusader principality, Acta of the congress held at Hernen Castle in May 2003* (Orientalia Lovaniensia Analecta, 147), ed. by **K. Ciggaar and M. Metcalf**, Leuven – Paris – Dudley, MA, 2006, pp. 79-92: Նաև՝ **Կ. Մուրաֆյան**, *Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում*, Երևան, 2001, էջ 312-315: **Յ. Տէր-Ղազարեան**, *Հայկական Կիլիկիա: Տեղագրություն*, Անթիլիաս, 1966, էջ 66-71:

² Ուշագրավ է, որ Կաստիլիայի թագավոր Ալֆոնսո X Իմաստունի (1252-1284) մեկենասությամբ գրված և հաճախ նրան վերագրվող ս. Մարիամ Աստվածածնի 420 երգերից մեկում հիշատակվում է Սև լեռը (տե՛ս **Ռ. Կյուպենկյան**, *Հայ-պորտուգալական հարաբերություններ*, Երևան 1986, էջ 22): Պոեմի գլխավոր հերոսը սատանայի ձեռքից ազատվելու նպատակով նավարկելով հասնում է Հայաստան (այսինքն՝ Կիլիկիայի Հայկական թագավորություն), որտեղից էլ անցնում է Սև լեռ՝ այնտեղ գտնելով մի սրբակենցաղ ճգնավորի, որը խորհուրդ է տալիս աղոթել ս. Մարիամին և խոստանում պատանու համար պատարագ մատուցել: Հաջորդ օրը, պատարագի ընթացքում սատանաները տղային առևանգում են եկեղեցուց, սակայն ս. Մարիամ Աստվածածինը փրկում է նրան և վերադարձնում եկեղեցի (պոեմի համառոտ ամփոփումն անգլերենով տե՛ս *The Oxford Cantigas de Santa Maria Database*, director **S. Parkinson**, poem number 115, http://csm.mml.ox.ac.uk/index.php?narOption=nar&p=poemdata_view&rec=115): Կարծում ենք՝ միջնադարում Սև լեռան

թյուն են ծավալել ասորի, հայ, հույն, վրացի և լատին կրոնավորները: Հայկական վանքերը Սև լեռներում ծաղկում են ապրել ԺԱ. դարից սկսած՝ վերածվելով թե՛ Կիլիկյան Հայաստանի, թե՛ բուն Հայաստանի գրչության, մշակութային և կրթական նշանավոր կենտրոնների, որոնց ձևավորման ու զարգացման գործում նշանակալի է Գրիգոր Վկայասերի (1066-1105) և նրա գործակիցների ներդրումը:

1066 թ. Կարսի թագավոր Գագիկ Բ Աբասյանի և նրա ղուստր Մարիամի միջնորդությամբ, ինչպես նաև Բյուզանդիայի Կոստանդին X Դուկաս (1059-1067) կայսեր թույլտվությամբ, կաթողիկոս է օծվում Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վահրամը՝ ստանալով Գրիգոր անունը³: Գրիգոր Վկայասերը կաթողիկոսական գահը ստանձնում է դժվարին ժամանակաշրջանում, երբ կործանվել էր Բագրատունյաց թագավորությունը, ուժգնացել էին սելջուկ-թյուրքական արշավանքները, իսկ Բյուզանդիայի ծավալած պառակտիչ քաղաքականության արդյունքում հայ ազատանին, կայսրին հանձնելով իր տոհմական կալվածքները և բյուզանդական տիրողոսներ ստանալով, վերաբնակեցվում էր Կիլիկիայում, Կապադոկիայում և Հյուսիսային Ասորիքում⁴: Ստեղծված աշխահաքաղաքական նոր պայմաններում վտանգված էր նաև Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը: 1045 թ. Անիի անկումից հետո թե՛ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և թե՛ նրա հաջորդը՝ Խաչիկ Բ Անեցին, կայսրերի հրամանով արգելափակվում են Կոստանդնուպոլսում, և նույնիսկ, երբ ազատվում են աքսորից, Բյուզանդիան արգելում է նրանց վերադառնալ Անի՝ շարունակելով թուլացնել կաթողիկոսական իշխանությունը, և, ըստ երևույթին, նաև մտավախություն ունենալով, որ կաթողիկոսները կարող են այնտեղ հայերի համար միավորիչ ուժ հանդիսանալ⁵: Բյու-

վամբեր՝ որպես ճգնակեցության կենտրոն, մեծ համբավ էին ձեռք բերել և հայտնի էին Կիլիկիայի սահմաններից դուրս, ինչն էլ արտացոլվել է այս շափածո ստեղծագործության մեջ:

³ Գրիգոր Վկայասերի կաթողիկոսանալը դեռևս ծրագրել էր Գրիգոր Մագիստրոսը: Վերջինս Պահլավունյաց առհմը ներկայացնում է որպես Արշակունիների և Գրիգոր Լուսավորչի շառավիղ, ինչպես նաև աշխարհիկ ու հոգևոր շրջանակներում սկսում է արժարծվել Սահակ Պարթևի տեսիլը, ըստ որի Գրիգոր Լուսավորչի շառավիղներից մեկը կրկին կաթողիկոս է օծվելու: Շրջանառվող այս գաղափարները պարարտ հող են նախապատրաստում Վահրամի կաթողիկոսանալու համար (մանրամասն տե՛ս **Կ. Մաթևոսյան**, *Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս*, Երևան, 2015, էջ 74-83: նաև **Կ. Մաթևոսյան**, *Անի և անեցիները*, Երևան, 2021, էջ 200-210): 1066 թ. կաթողիկոսական իշխանության վերականգման հանգամանքների վերաբերյալ ֆննդությունը տե՛ս **Վ. Փորոսյան**, *Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. Դարի կեսեր – ԺԲ. դարի սկիզբ)*, Երևան, 2018, էջ 23-44:

⁴ **Ա. Բոգոյան**, «Կիլիկիայի հայկական պետությունը. իշխանությունից թագավորություն», *էջ-միածին*, 2006, դեկտեմբեր, էջ 75:

⁵ Ըստ Արիստակես Լաստիվերցու, Կոստանդին IX Մոնոմախ կայսրը Պետրոս Գետադարձին արգելափակում է Կոստանդնուպոլսում՝ վախենալով, որ վերջինս կարող է Անիում ապստամբեցնել հայերին (այս հարցի առնչությամբ տե՛ս **Կ. Մաթևոսյան**, *Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը*, Սբ. Էջմիածին, 1997, էջ 43-46: **Վ. Փորոսյան**, *Հայոց կաթողիկոսական իշխանությունը*, էջ 105-106):

զանդիայի նպատակն էր Հայոց աշխարհիկ իշխանության պառակտումից հետո իրեն ենթարկել նաև Հայոց եկեղեցին՝ սահմանափակելով կաթողիկոսների գործունեությունը և պարտադրելով ընդունել քաղկեդոնականություն: Գրիգոր Վկայասերը քաջ գիտակցում էր այս ժամանակաշրջանում ստեղծված վտանգները և իր գործունեությամբ փորձեց պաշտպանել Հայոց եկեղեցին հույների կողմից հնչող մեղադրանքներից ու ամրապնդել եկեղեցու դավանական և ծիսական հենքը՝ հարստացնելով մատենագրությունն ու նպաստելով Կիրիկիայում ուսումնագիտական կենտրոնների հիմնմանը:

Այսպես, ըստ Մ. Ավդալբեգյանի՝ «...Վկայասերի շնորհիվ տոնակարգ են մտնում հայկական տոներն ու սրբախոսությունները, դրանք կայունացվում և օրինականացվում են և հետագայում տեղադրվում թարգմանական Հայսվավուրք ժողովածուների մեջ՝ ձևավորվելով իբրև հայկական Հայսմավուրք՝ իր ուրույն խմբագրությամբ... Գրիգոր Վկայասերի ու Կյուրակոս աշակերտի հիշատակարանների, մատենագրական աղբյուրների համադիր քննությամբ պարզվում է հայ Հայսմավուրքների ծագման պատմությունը ճաշոց ժողովածուների հիմքի վրա...»⁶: Այս հարցը մանրամասն քննել է նաև Ռ.Վարդանյանը. «...Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը, ինչպես և Կիրակոսը ոչ միայն թարգմանել են վարքեր և վկայաբանություններ, գրել նոր ներբողյաններ մեր սրբերի մասին, այլ դրանց և արդեն եղածի հիման վրա կազմել Յայսմաուրք: Հանրահայտ են հատկապես Գրիգոր Վկայասերի, ինչպես և Գրիգորիսի թարգմանությունները ու սեփական ստեղծագործությունները, որոնք սփռված են տարբեր ճառընտիրներում և Յայսմավուրքներում»⁷: Մ. Ավդալբեգյանը նշում է, որ Յայսմաուրք ժողովածուների ստեղծման գաղափարը «բնութագրական է ոչ միայն մեր, այլև ուրիշ ժողովուրդների պատմական համապատասխան ժամանակաշրջանների համար: Նշված արարողական ժողովածուները, եկեղեցական տոնակարգի սահմաններից բացի, ստանում էին պատմական նշանակություն, սեփական-ազգային ավանդների պահպանումով սահմանազատվում ու հակադրվում էին օտար նվաճողների հնարավոր ոտնձգություններին»⁸:

Ուշագրավ է, որ ԺԱ. դարում թարգմանական բեղուն գործունեություն են ծավալել նաև վրացիները՝ Յեփիմիոս Աթոնեցու (Եքվթիմե Մթածմինդելի, 955-1028) և Գիորգի Մթածմինդելիի (1009-1065) գլխավորությամբ⁹: Ինչպես կտես-

⁶ Մ. Ավդալբեգյան, «Յայսմաուրք» ժողովածուները, Երևան, 1982, էջ 52:

⁷ Ռ. Վարդանյան, Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 284: Գրիգոր Վկայասերի գործունեության վերաբերյալ տե՛ս նաև Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 32-33: Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ. Ա, էջմիածին, 2001, էջ 1498-1500:

⁸ Մ. Ավդալբեգյան, «Յայսմաուրք» ժողովածուները, էջ 36:

⁹ Յեփիմիոս Աթոնեցին, ի թիվս այլ երկերի, հունարենից վրացերեն է թարգմանել Հովհան Պանոզի կանոնագիրը՝ իր կողմից հայերին վերաբերող կանոններ ավելացնելով, որոնք

նենք, այս շրջանում վրացի վարդապետների ձեռնարկած մատենագրական գործունեության առանցքային նպատակը նույնն էր, ինչ հայերինը՝ պաշտպանել եկեղեցու ինքնուրույնությունը՝ հարստացնելով եկեղեցական մատենագրությունը և ամրապնդելով դավանական հենքը, որը թույլ կտար հակադրվել Հունական եկեղեցու ոտնձգություններին:

1065 թ. մահանում է Գիորգի Մթածմինդելին, իսկ արդեն 1066-1068 թթ. միջակայքում Գիորգի Մցիրեն գրի է առնում նրա վարքը: Վարքագրի հաղորդած տեղեկությունների համաձայն, երբ Անտիոքի պատրիարքական աթոռը զբաղեցնում է Կոստանդնուպոլսից նոր ժամանած Թեոդոսիոսը¹⁰, հույները փորձում են զրպարտել վրացի վանականներին՝ նպատակ ունենալով հեռացնել նրանց Սև լեռան Ս. Սիմեոն վանքից. «Օգնի՛ր մեզ, սուրբ տեր, ազատի՛ր մեզ այս մեծ պատուհասից և փրկի՛ր մեզ այս անպիտան և օտար մարդկանցից, քանի որ թվով շուրջ վաթսուն մարդ կա մեր վանքում, որոնք իրենց վրացի են կոչում, բայց մենք չգիտենք, թե ինչ մտադրություն ունեն, կամ թե որն է նրանց հավատքը: Առանց այդ էլ նրանք հենց այնպես գրավել են վանքի շուրջ կեսը»: Սա լսելով պատրիարքը զարմացավ և ասաց նրանց. «Ինչպե՞ս է հնարավոր, որ վրացիները չեն հարում ուղղափառությունը»: Եվ, քանի որ նա դեռ ծանոթ չէր մեր ծագմանը, նրանք հավաստիացրին, ու քողարկելով իրենց խորամանկությունը՝

բացակայում են հունարեն բնագրում: Այդ կանոնների, ինչպես նաև, Գիորգի Մթածմինդելիի վարքից որոշ հատվածների վրացերենից հայերեն թարգմանությունը տե՛ս Լ. Մելիխտեթ-Քեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին*, հ. Ա. (Ե-ժԲ դար), Յերեվան, 1934, էջ 102-104, 119-121: Յեփիմիոս Արոնեցու և Գիորգի Մթածմինդելիի մասին մասին նաև տե՛ս Ս. Курцикидзе, «Евфимий Святогорец», *Православная Энциклопедия*, Т. XVII, под. ред. Патриарха Московского и всея Руси *Алексия II*, Москва, 2008, с. 457-461. Э. Габидзашвили, Н. Н. Крашенинникова, «Георгий Святогорец», *Православная Энциклопедия*, Т. XI, под. ред. Патриарха Московского и всея Руси *Алексия II*, Москва, 2006, с. 75-78.

¹⁰ Հավանական է Անտիոքի պատրիարք Թեոդոսիոս III (1057-1059) է: Նիկոն Սկլեոնեցին «Տակախկոնի» Յ1-րդ գլխում հաղորդում է, որ Անտիոքի պատրիարքը ժամանակին իրեն առաջարկել է ֆահանա ձեռնադրել, որից ինքը հրաժարվել է. «When our most holy master the patriarch summoned me – I was all the same still young – he did not precisely know my circumstances nor my mentality. He started to speak to me about ordaining me a priest and sending me to Baghdad. As to me, however, being certain of myself, that I am unacceptable for ordination, I was not interested» (W. J. Aerts, “Nikon of the Black Mountain, Witness to the First Crusade ? Some remarks on his person, his use of language and his work, named Taktikon, esp. Λόγος 31; Λόγος 31, translation”, *East and West in the Medieval Eastern Mediterranean, I, Antioch from the Byzantine reconquest until the end of the crusader principality, Acta of the congress held at Hernen Castle in May 2003*, (Orientalia Lovaniensia Analecta, 147), ed. by K. Ciggaarand M. Metcalf, Leuven – Paris – Dudley, MA, 2006, p. 142): Վ. Աերցը կարծում է այդ պատրիարքը կարող է Թեոդոսիոս III լինել (տե՛ս նույն տեղում, էջ 142, ծմբ. 12):

ասացին. «Մենք չգիտենք՝ նրանք վրացի՞ են, թե՞ հայ, և նրանց քահանան էլ մեր վանքում պատարագ մատուցելու իրավունք չունի»¹¹ (նուսերենից թարգմանությունը — Դ. Գ.): Այն, որ Ս. Սիմեոն վանքում վրացիներին արգելել էին պատարագ մատուցել, վարքում խոստովանում է նաև Գիորգի Մցիրեն՝ որպես պատճառ նշելով, թե ինչ-որ ժամանակ առաջ մի վրացի քահանա փորձել է վանքում պատարագ մատուցել առանց պատշաճ քահանայական զգեստի՝ սովորական տրեխներով և թիկնոցով:

Հաշվի առնելով, որ քաղկեդոնականություն ընդունած հայերը հաճախ կասկածվում էին «հերետիկոսություն» և Հայոց եկեղեցու դավանանքին գաղտնի հետևելու մեջ՝ զարմանալի չէ, որ հայ լինելու մեղադրանքը բավարար հիմք էր վրացի վանականների նկատմամբ հավատաքննություն սկսելու համար: Հետաքրքրական է, որ ի պաշտպանություն Սև լեռան վանքերում բնակվող հայ քաղկեդոնականների, հանդես է եկել Նիկոն Սկեռնեցին: Այս հարցին անդրադառնում է Ն. Մառը. «Նիկոնի հակիրճ հաղորդումից, սակայն, պարզ է դառնում, թե հատկապես ինչն էր դավանակից հայերի նկատմամբ հույների վրդովմունքի պատճառը: Հենց նույն հանգամանքով էր պայմանավորված որոշ հույների անբայրացակամ վերաբերմունքը նաև ուղղափառ վրացիների հանդեպ. նրանք պահպանում էին իրենց մայրենի լեզուն»¹²: Վ. Ջոբաձեն կարծում է Ս. Սիմեոն

¹¹ «Помоги нам, святой владыко, и избави от великой беды, и освободи нас от людей негодных и иноплеменных, ибо есть в монастыре нашем до шестидесяти человек, которые грузинами именуют себя, и не ведаем, о чем они думают, или какая есть вера их. И так дориасно полмонастыря захватили». И услышав это, патриарх удивился и сказал им: “И как это так возможно, чтобы грузины были неправославны?” Ибо еще не знал рода нашего, они же утверждали ему и как бы в покровение лукавства сказали ему: “Не ведаем, грузины ли они, или армяне, да и пресвитер их не может служить литургию в монастыре нашем”» (Գիորգի Մցիրե, “Житие и гражданство святого и блаженного отца нашего Гиорги Святогорца, перевод с древнегрузинского протоиерея Иосифа Зетеишвили”, *Символ*, № 38, Декабрь, Париж, 1997, с. 284). Այս հատվածում հանդիպող «дориасно» բառի շուրջ թարգմանիչը գրում է. «Дориасад - грузиненное греч. δωρεά - бесплатно, напрасно, вотще» (նույն տեղում, ծնթ. 50): Գիորգի Մթածմինդեղի վարքի անգլերեն հատվածաբար թարգմանությունը տե՛ս **W. Djobadze, Materials for the study of Georgian monasteries in the Western environs of Antioch on the Orontes** (Corpus Scriptorium Christianorum Orientalium, Vol. 372, Subsidia, T. 48), Louvain, 1976, pp. 50-59: Այս հատվածի թարգմանությունը չի ընդգրկվել Լ. Մելիխտեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի լեվ հայերի մասին» եռահատոր աշխատության մեջ:

¹² Ն. Մառ, «Արքաուն». քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, ուսերենից հայերեն թարգմանեցին՝ է. Մ. Շիրինյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Սարգսյանը, Մ. Մամյանը, ուսերենից ֆրանսերեն թարգմանեց Ս. Ն. Մուրավյովը, Երևան, 2016, էջ 51-52): Քաղկեդոնական հայերը իրենց ծիսակարգը կատարում էին հայերենով, բացառությամբ «Սուրբ Աստված» աղոթքի, որը ստիպված էին ասել հունարենով, որպեսզի չավելացնեն «որ խաչեցար վասն մեր» հատվածը (Նիկոն Սկեռնեցու հաղորդած տեղեկությունների և փաղկեղոնական հայերի մասին նաև տե՛ս է. Մ. Շիրինյան, «Կարությունը Կի-

վանքից վրացիներին հեռացնելու փորձը ոչ միայն զուտ դավանական բնույթի շարժառիթներ կարող էր ունենալ, այլև՝ տնտեսական. Ս. Միմեոն վանքը տիրապետում էր բավականին ընդարձակ կալվածքների ու հարստության, և հույները չէին ցանկանում, որ վրացի վանականները որևէ հավակնություններ ունենան այդ ամենի նկատմամբ, իսկ ինչպես տեղեկանում ենք Գիորգի Մթածմինդելիի վարքից, վանքում բնակվում էր շուրջ վաթսուն վրացի վանական, որոնք զբաղեցրել էին «...վանքի շուրջ կեսը»¹³:

Այսպես, Թեոդոսիոս պատրիարքը, լսելով հույների մեղադրանքները, կարգադրում է իր մոտ հրավիրել հունարենի տիրապետող և Աստվածաշնչից քաջատեղյակ վրացի վանականներից մեկին: Թեոդոսիոսի մոտ է մեկնում Գիորգի Մթածմինդելին և պատասխանում պատրիարքի դավանաբանական բոլոր հարցերին՝ հիմնավորելով վրացիների ուղղադավանությունը: Սակայն, պատրիարքը կասկածի տակ է դնում նաև Վրաց եկեղեցու առաքելահաստատությունը՝ նշելով, որ Վրաց եկեղեցու ինքնուրույնությունն օրինական չէ և չի համապատասխանում Առաքելական կանոնին, և քանի որ առաքյալներից ոչ մեկը չի քարոզել Վրաստանում, ուստի վրացիները կաթողիկոս պետք է օժեն Անտիոքում ու ենթարկվեն Անտիոքի պատրիարքությանը: Այս հարցով Թեոդոսիոսը Գիորգիից նույնիսկ պահանջում է նամակ գրել վրաց արքային: Ի պատասխան պատրիարքի մեղադրանքին, Գիորգին պնդում է, որ Վրաստանում քարոզել է Անդրեաս առաքյալը, իսկ Միմեոն Կանանացու գերեզմանը գտնվում է Աբխազիայի նիկոպոսիա բնակավայրում, և հավելում. «[Դո՛ւ,] սուրբ վարդապետ, մեզ համարում ես անգրագետ և թեթևամիտ, իսկ քեզ՝ իմաստուն և խորամիտ, սակայն նախկինում, երբ ողջ Հունաստանում ուղղափառություն չկար, գոթերի եպիսկոպոս Հովհաննը Մցխեթում էր եպիսկոպոս ձեռնադրվել, ինչպես գրված է Մեծ Յայսմաւորքում»¹⁴: Ըստ վարքագրի, այս հիմնավորումները բավարար են լինում պատրիարքին համոզելու համար: Իհարկե, Թեոդոսիոսի և Գիորգի Մթածմինդելիի բանավեճից շատ դրավագներ վարքում չափազանցված են, սակայն ակներև է՝ վրացի վարդապետները գիտակցում էին իրենց եկեղեցու ինքնուրույնությունն ապահովելու անհրաժեշտությունը, որի նպատակով ԺԱ. դարում ձեռ-

լիկյան Հայաստանի Սև լեռան հայկական վանքում», *ԲՄ*, 21, 2014, էջ 355-357: J. Glynias, "Byzantine Monasticism on the Black Mountain West of Antioch in the 10th-11th Centuries", *Studies in Late Antiquity*, 2020, 4 (4), pp. 442-446):

¹³ Տե՛ս W. Djbadze, *Materials for the study of Georgian monasteries in the Western environs of Antioch on the Orontes*, p. 82.

¹⁴ **გიორგი მცირე**, "Житие и гражданство святого и блаженного отца нашего Гиорги Святогорца", с. 284-287.

նարկում են թարգմանական բեղուն գործունեություն: Գիորգի Մցիրեի հազորդած տեղեկությունների համաձայն՝ Գիորգի Մթածմինդեղին հունարենից վրացերեն է թարգմանում տասնհինգ ձեռագիր, որոնցից վարքի հեղինակն ամենաարժեքավորն է համարում «Մեծ Յայսմաուրքը»՝ այն կոչելով եկեղեցական ծիսակարգի հիմքը. «...և եթե եկեղեցին ունի բոլոր գրքերը՝ բացի Յայսմաուրքից, ապա համտեսում է մեղրը՝ առանց զգալու դրա քաղցրությունը»¹⁵ (Յայսմաուրքի թարգմանությունը դեռևս նախաձեռնել էր Եքվթիմե Մթածմինդեղին, սակայն, զբաղված լինելով այլ գրվածքների թարգմանությամբ, շատ քիչ էր հասցրել շարագրել): Ինչ վերաբերում է Վրաց եկեղեցու առաքելահաստատության խնդրին, ապա մեկ այլ ափսոսում մատենագիր՝ Եփրեմ Մցիրեն, Սև Լեռան վրացական վանքերի եկեղեցապան Հովհան Կվիրիկեի մեկենասությամբ գրի է առնում Վրաստանի դարձի պատմությունը (ըստ Վ. Ջոբաձեի, երկը շարագրվել է 1057 թ. հետո)¹⁶: Եփրեմն իր աշխատությամբ փորձում է հիմնավորել Վրաց եկեղեցու առաքելահաստատությունը՝ նշելով, որ Վրաստանում են քարոզել Անդրեաս և Բարդուղիմեոս առաքյալները: Եկեղեցու ինքնիշխանության հարցը քննելիս հեղինակն օգտվում է հունական սկզբնաղբյուրներից և արձանագրում, թե վրացիներն ինքնուրույն են սկսել կաթողիկոս ձեռնադրել հենց Անտիոքի պատրիարքի թույլտվությամբ, երբ արաբական արշավանքների պատճառով կաթողիկոսական թեկնածուին Անտիոք ուղարկելը վտանգավոր էր դարձել: Հե-

¹⁵ «Ибо, как мы сказали, приняв честь священства, спустя малое время в начальники церкви был определен, старшим над священниками и певчими был поставлен. И, пребывая в этом малое время, вспомнил он мучение скрывшего талант и еще больше испугался за непослушание учителю своему. Поэтому-то, как мудрый строитель, сперва доброе положил основание, начав строить церковь Божию, ибо прежде всего перевел Синаксарь, поелику это есть основание Церквей, без которого невозможно преуспевание Церкви. Ибо какая Церковь Синаксаря не имеет, хотя бы и все книги имела, мед ест, а не́бо сладости не чувствует. Это есть, как мы сказали, первое украшение Церкви. Ибо хотя переведен был и святым отцом Эптимэ Синаксарь, но совсем мало написал по недосугу от перевода других книг. И слышали мы и это, что если бы все дни его были при нем, полностью бы перевел» (նույն տեղում, 271-272). Ուշագրավ է, որ վարքի մեկ այլ հատվածում հեղինակը հիշատակում է, որ ժամանակին վրացիները հայերենից քարգմանություններ են կատարել. «...также хотя и от начала были у нас и Писания и вера истинная и правая, но страна наша далеко была от страны Греческой, и, как семена нечистые, среди нас посеяны были лукавые семена армянские, неприязненные и злокозненные, и этим мы весьма повреждались, ибо род наш был искренним и невинным, а они как бы по причине правильности как бы к соблазну подвигали нас, и даже некоторые книги имели мы, от них переведенные» (նույն տեղում, էջ 268-269):

¹⁶ W. Djobadze, *Materials for the study of Georgian monasteries in the Western environs of Antioch on the Orontes*, p. 83.

տաքրքրական է, որ Նիկոն Սկլեոնեցին վրաց վանականների խնդրին անդրադառնում է «Տակտիկոն»-ի 37-րդ գլխում պաշտպանելով Սև լեռան Ս. Սիմեոն վանքում բնակվելու նրանց իրավունքը, իսկ Վրաց եկեղեցու ինքնավարության հարցի շուրջ խոսելիս կրկին օգտագործում է նույն փաստարկներն, ինչ եփրեմ Մցիրեն, առանց շոշափելու առաքելահաստատության վարկածը¹⁷:

Այսպիսով, ԺԱ. դարում բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից պաշտպանվելու հարցում հայ և վրաց վարդապետների որդեգրած քաղաքականությունն ուներ մեկ կարևոր ընդհանրություն՝ երկուսն էլ ձեռնարկում են թարգմանական արգասավոր գործունեություն, կազմում ու խմբագրում են ծիսական մատյաններ, հիմնում գիտակրթական կենտրոններ՝ հարուստ ձեռագրատներով, որի նպատակն էր մղվող պայքարում ամրապնդել եկեղեցու դիրքերը: Այս խնդրում նշանակալի դերակատարում ունեցան Սև լեռան, իսկ վրացիների դեպքում՝ նաև Աթոս լեռան վրացական գրչության կենտրոնները:

Այսպես, ինչպես ցույց է տվել Վ. Թորոսյանը, Գրիգոր Վկայասերը, հրապարակավ հրաժարվելով կաթողիկոսական գահից և իր փոխարեն տեղապահ նշանակելով Գեորգ Լոռեցուն (աթոռակալել է մինչև 1072 թ.), այնուհետև Բարսեղ Անեցուն, Կոստանդնուպոլսում գտնվելու ընթացքում կարողացավ խուսափել քաղկեդոնականություն ընդունելու կամ Հայոց եկեղեցում ծիսական բնույթի փոփոխություններ կատարելու բյուզանդական հնարավոր պարտադրանքից, քանի որ պաշտոնապես այլևս իրավասու չէր նման որոշումներ կայացնելու, սակայն փաստացի շարունակում էր պահպանել իր գերագահությունը¹⁸: Ներսես Շնորհալու վարքից տեղեկանում ենք, որ կաթողիկոսը Կոստանդնուպոլիս է ժամանում հմուտ թարգմանիչների և գրիչների ուղեկցությամբ, որոնք արագորեն թարգմանում էին անհրաժեշտ երկերը. «և առեալ թարգմանէր զվարս սուրբ հարց և զպատմութիւնս վկայից, և զմատենաս ուղղափառ վարդապետաց, և զճառս ներբողենից որ 'ի տօնս տէրունիս և յիշատակս սրբոց, և տայր ցայնոսիկ

¹⁷ «Потому что со времени блаженного Анастасия, священномученика и патриарха Антиохии, для них не был рукоположен соборный архиепископ по причине трудности пути, и поскольку никто не смеет через земли агарян пройти. И по соборному решению митрополитов, архиепископов и епископов того места он дал ивирам повелительное послание, чтобы соборный архиепископ Иверии рукополагался от епископов его страны» (տե՛ս «Из «Тактикона» Никона Черногорца (подготовка текста, перевод и комментарии Л. Герд)», Библиотека литературы Древней Руси, Т. 8, под ред. Д. С. Лухачева, Л. Д. Дмитриева, А. А. Алексеева, Н. В. Понирко, Санкт-Петербург, 2003, с. 415): Վ. Ջոբաձե եմբարում է՝ եփրեմ Մցիրեն ու Նիկոն Սկլեոնեցին այս տեղեկությունը ֆաղել են հունական նույն սկզբնաղբյուրից (տե՛ս W. Djobadze, *Materials for the study of Georgian monasteries in the Western environs of Antioch on the Orontes*, p. 67):

¹⁸ Վ. Թորոսյան, Հայոց կաթողիկոսական իշխանությունը, էջ 130-133:

որ ընդ նմայն էին՝ արք ճարտարք և իմաստունք, յարագագիր գրչութիւն և 'ի գիտութիւն բանի. զոր առեալ վաղվաղակի փոխարկէին¹⁹, սրբաբանեալ ըստ մերումս բայի զորկս ամենեւին և քերեալս ըստ քերթողացն արհեստի»²⁰: Թարգմանութիւններն ավարտելուց հետո Գրիգոր Վկայասերի գործակիցները գաղտնի կերպով Կոստանդնուպոլսից նավով դուրս են բերում ձեռագրերը, քանի որ «կասկածէր սուրբ հայրապետն 'ի հունականն խօթամիտ և բարձրայօնակ հնացեալ շարութեանէ. զի թէ իմասցին, ոչ տացեն հանել 'ի նոցանէ զթարգմանեալ մատեանսն»²¹, և միայն նրանց մեկնելուց մի քանի օր անց Վկայասերը նույնպես հեռանում է մայրաքաղաքից:

Գրիգոր Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժման արդյունք հանդիսացան հետևյալ երկերը՝ ա. վկայութիւն սրբոյն Ստեփանոսի Հոռովմայ հայրապետի եւ որոց ընդ նմա, բ. Պատմութիւն վարուց Եփրեմի Ասորոյ, գ. Կանոն Մեծի հինգշաբթին ոտնլուային, զոր արարեալ է Տեառն Եփրեմի խորին Ասորոյ, գ. Եփրեմի խորին Ասորոյ ներբողեան ի գլխատումն Յովհաննու Մկրտչի, ե. Վկայութիւն սրբոյն Լարենտիոսի, գ. Աքանչելիք որ եղեն ի ձեռն սրբոյն և Մեծի վկային Քրիստոսի Գէորգայ, է. Վարս ճգնութեան Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի, ը. Պատմութիւն վարուց սուրբ հաւրն մերոյ Գրիգորիսի Աստուածաբանի Նագիագու եպիսկոպոսի, թ. Ներբողեան սուրբ Գրիգորի Լուսաւորչի, ժ. Վկայաբանութիւն սրբոյն Եղամբեոսի եւ Ղամբեուհա, ժա. Պատմութիւն սրբուհոյ Պարասկեւեայ, որ կոչի ուրբաթ, ժբ. Վկայաբանութիւն նահատակութեան սրբուհոյն Վառվառայ կուսին եւ երանելոյն Յուլիանեայ, ժգ. Պատմութիւն սուրբ Մամասու ծնընդեան և սնընդեան և վկայութիւն նորին, ժդ. Վարք եւ պատմութիւն սուրբ հօրն Օնօփրիոսի անապատականի, զոր պատմեաց սուրբ հայրն Պափնոտի, ժե. Վկայաբանութիւն սուրբ եւ փառաւորեալ վկայիցն եւ երանեալ նահատակացն Քրիստոսի՝ Փոտինոսի եւ Անիկտոսի, ժզ. Մեկնու-

¹⁹ Այս հատվածում հանդիպող բազմիմաստ «փոխարկէին» բառը, ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի, կարող է նաև օգտագործվել «թարգմանել» իմաստով, օրինակ՝ «Զամենայն ազգաց գմատեանս և գպէտս 'ի յոյն լեզու փոխարկել» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Երևան, 1981, էջ 950: Նաև՝ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումներ՝ Ա. Սարգսեանի, Երևան, 1991, էջ 9): Բառարանում այս բառին զուգահեռ տրված է հունարեն ձևը՝ μεταβάλω, որը նույնպես կարող է ստանալ «թարգմանել» նշանակությունը (տե՛ս A Greek-English Lexicon, compiled by H. G. Liddell and R. Scott, Oxford, 1996, p. 1110):

²⁰ Սրբոյն Ներսէսի Շնորհալույ Պատմութիւն վարուց (Սովբեք Հայկական ԺԿ), Վենետիկ, 1854, էջ 22:

²¹ Նույն տեղում, էջ 22-23: Ըստ Վ. Թորոսյանի, «բյուզանդական արժուներհում տեղյակ չէին Վկայասերի ձեռնարկած բոլոր թարգմանություններին», որն էլ կարող էր ձեռագրերը մայրաքաղաքից դուրս բերելու համար արգելի հանդիսանալ (Վ. Թորոսյան, Հայոց կաթողիկոսական իշխանութիւնը, էջ 139-140):

Թին Գործոց Առաքելոց Յովհանու Ոսկեբերանի եւ Եփրեմի Ասորոյ, Ժէ. Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի Յովհանու Ոսկեբերանի²²:

Գրիգոր Վկայասերն, ավարտելով իր ճանապարհորդությունների շղթան, 1101 թ. հաստատվում է Գող Վասիլի²³ իշխանության տարածքում: Անդրադառնալով Գրիգոր Վկայասերի թարգմանական գործունեության քննությանը՝ հարկ է նշել, որ խիստ ուշագրավ է կաթողիկոսի՝ որոշ գրվածքների պարագայում կիրառած թարգմանական եղանակը, որի մասին տեղեկանում ենք պահպանված հիշատակարաններից. նախ հայերենագետ օտարազգի թարգմանիչը բնագիրը բառացի վերածում էր հայերենի, այնուհետև տեքստը խմբագրում էր Վկայասերի աշակերտներից կամ գործակիցներից մեկը՝ այն համապատասխանեցնելով հայերենի լեզվաոճական կանոններին: Թարգմանություններ կատարելու այս եղանակին ուշադրություն են դարձրել Ն. Պողարյանը, Ն. Ակինյանը, Լ. Տեր-Պետրոսյանը, Ա. Բոզոյանը: Այս առնչությամբ Ն. Պողարյանը գրում է. «Այդ թարգմանությունները կը պարտինք ընդհանրապես զոյգ մը գործիչներու աշխատակցութեան, որոնցմէ մին օտարազգի, ասորի կամ յոյն, հայերէնագէտ մըն է, որ կը կատարէ առաջին վերձանումը, իսկ երկրորդը հայ մըն է, որ կատարուած շաղփաղփ թարգմանութեան նի կանոններուն համաձայն»²⁴: Ա. Բոզոյանը թարգմանական այս եղանակը համարում է «ինքնատիպ և համապարփակ» գործընթաց՝ օրինակներ բերելով հայկական մատենագրությունից²⁵: Լ. Տեր-Պետրոսյանը թարգմանական նման գործունեության սկզբնավորումը կապում է Գրիգոր Վկայասերի անվան հետ՝ նշելով, որ այս եղանակով կատարված «...հայերեն թարգմանությունները բնագրական տեսակետից երբեմն բավականին հե-

²² Ռ. Վարդանյան, *Հայոց Տոնացույցը*, էջ 284-286: Ն. Եպս. Մովսէսյան, «Գրիգոր Վկայասեր եւ թարգմանութիւն վարուց սրբոց», *Սիրն*, 1967, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9-10, էջ 430-432: Նաև՝ Գ. Զարբանալյան, *Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց* (Դար Գ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 721-722:

²³ Ըստ Ռ. Գրուսեի, Վասիլին կոչել են Գող՝ որպէս «տարածներ հափշտակող»: Այս տեսակետը կիսում է նաև Լ. Տեր-Պետրոսյանը. «...ինչպէս ցույց է տվել Հ. Անտոյանը, իսկ հետագայում հիմնավորել է Ժ. Տետյանը, XII-XIII դդ. հայկական հուշարձաններում գողանամ բայը հանախ գործածվել է «գրավել, նվաճել» իմաստով» (Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Ա, Երևան, 2005, էջ 332, 455, ծնթ. 172):

²⁴ Ն. Եպս. Մովսէսյան, «Օտարազգի հայերէնագէտներ, ԺԱ-ԺԳ դար», *Սիրն*, 1968, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 9-12, էջ 446: Ն. Պողարյանի հոդվածի այս հատվածն, ամենայն հավանականությամբ, տպագրական սխալի արդյունքում կիսատ է մնացել:

²⁵ Ա. Բոզոյան, «Այլազգի թարգմանիչները հայ մատենագրության մեջ», *Լեոն Խաչիկյան 90, նյութեր մատենագրարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի* (9-11 հոկտեմբերի 2008 թ.), Երևան, 2010, էջ 277-282: Եվրոպական մատենագրության մեջ հանդիպող նման եղանակով իրականացված թարգմանությունների մասին մանրամասն տե՛ս Բ. Bistue, *Collaborative translation and multi-version texts in Early Modern Europe* (Transculturalisms 1400-1700), Surrey – Burlington, 2013, p. 53-81:

ուանում են իրենց նախօրինակներից և փաստորեն դառնում նրանց ազատ փոխադրությունը»²⁶: Ն. Ակինյանը, քննելով Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց»-ի թարգմանությունն հանգամանքները, շեշտում է, որ Կիրակոս Գիտնականը թարգմանությունը սրբագրել է առանց իր մոտ ունենալու երկի հունարեն բնագիրը. «Մեկնութեան սրբագրութիւնը կատարեց Կիրակոս վարդապետ, ի հարկէ առանց աչքի առաջ ունենալու յոյն բնագիրը: Որչափ ալ կը հաւաստէ Կիրակոս, որ շատ ուշադրութեամբ կատարած է իր սրբագրութիւնները, ըստ կարի աշխատելով, որ չայլայլի բնագիրը, բայց եւ այնպէս կամայ ակամայ պիտի աղաւաղէր բնագրի ամբողջութիւնը»²⁷:

Ռ. Վ. Շեյթանյանը, համեմատելով Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց»-ի հունարեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը, կարծում է՝ հայերեն թարգմանությունը հավատարիմ է մնացել մեկնության հունարեն տարբերակին²⁸: Անդրադառնալով Կիրակոս Գիտնականի կողմից հայերեն թարգմանության խմբագրությանը՝ Ռ. Վ. Շեյթանյանը հավանական է համարում, որ Կիրակոսը ձեռքի տակ ունեցել է մեկնության հունարեն նախնական տարբերակը, որն օգտագործել է թարգմանությունը սրբագրելիս²⁹:

Ըստ Մ. Է. Շիրինյանի, Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց» երկի հայերեն թարգմանության համար կիրառված եղանակը կարելի է անվանել համատես (*синонимический*), որն, ըստ երևույթին, առավել հատուկ է մեկնողական բնույթի գրվածքներին³⁰:

Կաթողիկոսի պատվիրած թարգմանությունների մասին տեղեկությունները, ինչպէս արդեն նշեցինք, պահպանվել են այդ ձեռագրերի հիշատակարաններում, որոնց անդրադառնանք ստորև:

1076/1077 թթ., Գրիգոր Վկայասերը Կիրակոս հռետորին է պատվիրում թարգմանել Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց»-ը, որն այնուհետև վերամշակում է Կիրակոս գիտնականը. «...ես Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւոնոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռաց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ, ի

²⁶ Լ. Տեր-Պետրոսյան, «Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման», *Էջմիածին*, 1982, ապրիլ, էջ 49-50: Նաև՝ նույնի, *Ասորիների դերը հայկական Կիլիկոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում* (հայագիտական մատենաշար «Քաղմավեպ», 28), Վենետիկ, 1989, էջ 29:

²⁷ Ն. Ակինեան, «Կիրակոս վ. Գիտնական», *ՀԱ*, 1952, թիւ 10-12, 1952, էջ 495:

²⁸ *La version arménienne ancienne des Homélie sur les Actes des Apôtres de Jean Chrysostome. Homélie I, II, VII, VIII* (CSCO, 607, Scriptores Armeniaci, T. 27), ed. R. V. Chétanian, Louvanii, 2004, p. XLVII.

²⁹ Նույն տեղում, էջ XXXIX-XL:

³⁰ Այս հարցի շուրջ մանրամասն տե՛ս Է. Մ. Շիրինյան, «Սուրբգրային նախակրթությունները հայ մատենագրության մեջ», *Էջմիածին*, 2022, յունուար, էջ 41-44:

սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն հալածանաւք հասի ի պայծառաշէն կայանս սրբոյն Կոստանդիանոսի եւ մեծաւ ըղձամբ հայցեալ գտի գտենչալիս յոքունց, զգերահրաշ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկեբերանի լուսաւոր եւ ոգեշահ վարդապետութեամբ: Եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիրակոսի յունական եւ հայկական ուսմամբն պերճացեալ եւ առատաձեռն արգասեաւք, ետու թարգմանել գտենչալիս ոգւոյ իմոյ: Եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրեւ գտախտական նախամարգարէին, եւ մեծաւ տաժանմամբ հատեալ գհամատարածն Լիբիա եւ Ասիական ծոցոյն, խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեմայ, եւ ստորոտս Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն, եւ գտի անդ զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս, որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգեայ՝ փոխանորդին մեր: Եւ սորա յաւժարական մտաւք աշխատութիւն զանձամբ առեալ ըստ առատատուր հոգւոյն պարգեւացն, վերստին արծարծեալ զխորթացեալ բանս հռետորին, յեղանակելով եւ դիւրալուրս եւ յարմարականս մերոյին ազինս»³¹: Ինչպես տեղեկանում ենք հիշատակարանից, Գրիգոր Վկայասերը բավականին բարձր է գնահատել այս երկի թարգմանության կարևորությունը, որն իրականացնելու նպատակով հույն Կիրակոսին առատորեն վարձատրել է: Կիրակոս հռետորի մասին սկզբնաղբջուրներում այլ տեղեկություններ չեն պահպանվել, իսկ Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց»-ը նրա թարգմանությունում մեզ հայտնի միակ աշխատասիրությունն է: Ն. Ակինեանը ենթադրում է, որ այս Կիրակոս հռետորը կարող է այն հույն Կիրակոս դպիրը լինել, որին Գրիգոր Մագիստրոսը երկու թուղթ է ուղղել³²: Մեզ հասած տվյալների սակավության պատճառով, դժվար է այս տեսակետը հիմնավորել կամ հերքել:

Գրիգոր Վկայասերը հիշատակարանում հայտնում է, որ Կիրակոս Գիտնականը «վերստին արծարծում» է հույն հռետորի թարգմանությունը իր «յաւժարական մտաւք»՝ փորձելով այն հարմարեցնել հայոց լեզվին:

Գրիգոր Վկայասերի հանձնարարությամբ հույն հռետոր Թեոփիստեն, թարգմանում է հայերեն երեք գրվածք՝ Հովհանն Ոսկեբերանի վարքը, Թեոփիլոսի հեղինակած ներբողյանը՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին, Հովհանն Ոսկեբերանի Հովհաննու Ավետարանի մեկնությունը: Մ. Չամչյանը և, վերջինիս հետևելով Հ. Մանուչարյանը, Թեոփիստեին համարում են նաև Գրիգոր Աստվածաբանի վարքի թարգմանիչ³³, սակայն սա չեն հաստատում մեզ հասած հիշատակարաններ-

³¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ գգ., աշխ.՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1988, էջ 108-109: Նաև՝ Գարեգին Ա կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 253-256:

³² Ն. Ակինեան, «Կիրակոս վ. Գիտնական», էջ 497-498:

³³ «Նոյնպես ևս ՚ի ձեռն նորին Թեոփիստեայ ետ թարգմանել զվարս Ոսկեբերանին և Գրիգորի Ա[ստույ]ծաբանի. և յանձն առաւ աշակերտին իւրում Մատթէոսի երիցու ըստ ոճոյ հայոց

րում պահպանված տեղեկությունները: Եղմ. 787 Ճառընտրի հիշատակարանում կարդում ենք. «Թարգմանեցաւ Պատմութիւն սրբոյ եւ փառաւորեալ հայրապետին Գրիգորի Աստուածաբանի ի հինգ հարիւրորդի յիսներորդի (1101) թուականութեան մերում, հրամանաւ նախասացեալ սուրբ վկայասէր կաթողիկոսին Գրիգորիսի, ի յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոց եւ ազգի իւրոյ, զոր եւ մասնակից արասցէ Քրիստոս Աստուած եւ բազմերջանիկն Գրիգորի Աստուածաբանի: Այլ եւ դուք, ով սրբասնեալ մանկունք եկեղեցւոյ, զնոյն մաղթեցէք եւ ի յիշատակարանէ ընդարինակագրաց մի պակասեցուցանէք զյիշատակն նորա: Ով հայր սուրբ ըստ Աւետարանին եւ տէր վարդապետ, զհրամայեալս ըստ կարի իմում յանկ հանի, զոր եւ դու իջանելով ըստ իս, ընկալ գթածաբար եւ զսխալանսն ուղղեա վարդապետաւրէն: ԶԱբրահամ հոգելից ծերունի յիշեսչիք ի Տէր Քրիստոս: Այլ եւ զՍտեփանոս հոգեւոր որդի նորա զստացաւ զորոյս յիշեսչիք ի Տէր»³⁴:

Գ. Հովսեփյանը ենթադրում է՝ ձեռագրում հիշատակվող Աբրահամ ծերունին առնչվում է թարգմանություն ժամանակաշրջանին³⁵: Հիշատակարանում թարգմանչի անունը նշված չէ, և թարգմանությունը Թեոփիստեին վերագրելու համար կովան կարող է հանդիսանալ գրություն թվականը՝ 1101, որը համապատասխանում է Թեոփիստեի թարգմանական գործունեության ժամանակաշրջանին, սակայն, չենք կարծում՝ միայն այդ փաստը բավարար է նման ենթադրության համար: Հնարավոր է նաև՝ Չամչյանը ձեռքի տակ վարքի մեկ այլ ընդօրինակություն է ունեցել, որտեղ որպես թարգմանիչ է նշվել հույն հոեատոր:

Այսպես, 1101/1102 թթ. Գրիգոր Վկայասերը, հաստատվելով Սև լեռան

յօրինել գայն. որ գրէ նա ինքն Մաթթեոս. զորոյ զձեռագիրն ունիմ առ մեզ՝ գրել ՚ի թուին հայոց իբր. ԾԾԳ» (Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 20-21: Հ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի (Առաքելոց վանքի գրչության դպրոցը), Երևան, 1982, էջ 29): Եղմ. 1 Ճառընտրում ներառված Գրիգոր Աստվածաբանի վարքի վերնագրում թարգմանությունը վերագրվում է Վկայասերին. «Վարք և փաղափարություն Ս. Կորն մերոյ Գրիգորի Աստուածաբանի նազիագու Եպիսկոպոսի, զոր գրեաց ֆահանայն Կեսարու Կապաղովկացոց եկեղեցոյն և հոմանունն նորին, զոր թարգմանեաց ի յունականէն Սրբազան Կաթողիկոսն Հայոց Մեծաց՝ Գրիգորիոս Վկայասերն» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Առաջին, կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1966, էջ 4: Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, 284: Հմմտ. Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 13-14: E. Mathews Jr., “Syriac into Armenian: The Translations and their Translators”, *Journal of the Canadian Society for Syriac Studies*, 10, 2010, p. 39):

³⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 137: նաև՝ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 281-284:

³⁵ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 284:

Պառլահո վանքում (ասորերենից՝ «Դրախտ Աստուծոյ»³⁶), Թեոփիստեին հանձնարարում է հունարենից հայերեն թարգմանել Հովհանն Ոսկեբերանի վարքը, որն այնուհետև խմբագրում է կաթողիկոսի աշակերտ Մատթեոս քահանան. «Յամի հազարերորդի հարիւրերորդի երկրորդի (1102) Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեանն և ի հինգ հարիւրերորդի յիսներորդի (1101) մերում թուականութեանս և յաւթն և ի տասներորդ[ի] թագաւորութեան Կոմինոսի Ալէքսի բռնակալի, ես (Գրի)գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ի հայկազունոյ ըստ աշխարհի Պարթեւ, ըստ ժառանգութեան Պահլաւիկ, ըստ ցեղընտիր լինելոյ յազգէ Արշակունի, որ և ողորմութեամբն Աստուծոյ կոչեցա ի դիտապետութիւն Ասքանազեանս և բնիկ աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց և ի յե(ր)կաբնակաց: Եւ ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեաւն կոչեն, ի մեր սեփհական պարգեական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պառլահոյ կոչի, որ թարգմանի «Դրախտ Աստուծոյ», եւ անդ յերեսուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս՝ թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ և սքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի հայրապետի, ի ձեռն առն միոյ, որում անուն էր Թէոփիստէ, ազգաւ յոյն:

Եւ ապա ետու վերստին արծարծել զսա ի տարաբան և յաւտարածայն բայից և բառից առաջին թարգմանութեանն, ըստ քերդողացն իմաստից՝ միաշար տողելով ի ձեռն Մա[տ]թեոսի քահանայի, որ սնեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ»³⁷:

Ուշագրավ է, որ Վկայասերի աշակերտ և վարքի թարգմանության խմբագիր Մատթեոսը, ձեռագրի այլ ընդօրինակություններում հիշատակվում է որպես եպիսկոպոս, ինչպես օրինակ՝ եղմ. 79 ձեռագրում³⁸, ՄՄ 1913 ժողովածուում (1714-1717 թթ.)³⁹, ինչպես նաև Ղալաթիո մատենադարանի 79 ձեռագրի մեջ, որտեղ ի տարբերություն վերոհիշյալ ընդօրինակությունների, բացակայում է

36 Հ. Տեր-Ղազարյանը կարծում է, որ Պառլահո կամ «Դրախտ Աստուծոյ» անվանումը վերաբերում է ոչ թե մեկ վանքի, այլ միջնադարում օգտագործվել է «սուրբ տեղիք» իմաստով, այսինքն, ըստ հեղինակի, «Դրախտ Աստուծոյ» է կոչվել Ամանոսի լեռների այն հատվածը, որտեղ կենտրոնացել է «վանքերու եւ մենակեացներու բազմութիւնը...» (տե՛ս Յ. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ, Հայկական Կիրիկիա: Տեղագրութիւն, էջ 67-69):

37 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 135-136: Նաև՝ Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 283-286: Այս հիշատակարանը Գ. Հովսեփյանը հրատարակել է ըստ եղմ. 787 ձևընտրի, նրա կարծիքով ձեռագիրն ընդօրինակվել է ԺԳ. դարում:

38 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Առաջին, էջ 268-269:

39 Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 2, ձեռագիրք 1801-2100, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 516-522):

«միաշար տողելով» արտահայտությունը. «...ետու վերստին արծարծել զսա ի տարաբան եւ յօտարաձայն բայիցն եւ բառիցն առաջին թարգմանութեան, ի ձեռն Մատթեոսի եպիսկոպոսի, որ սնեալ եւ վարժեալ եր ընդ մերով ձեռամբ»⁴⁰:

Մեզ հետաքրքրող հաջորդ աշխատությունը, որ թարգմանել է Թեոփիստեն Գրիգոր Վկայասերի պատվերով, Հովհան Ոսկեբերանի «Յոհաննու Մեկնութիւն»-ն է. «...յիշեցէք զամենատրուպ եւ զբազմամեղս զԿիրակոս, որ բազում աշխատեցայ ի սայս, սակս անյարմար եւ խրթնի թարգմանութեան հոետորին յունականի, որ եւ ջանացի յերիւրել միայն, ոչ յաւելուլ եւ ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն: Իսկ եթէ ի վեր զուրով սորայս մակացութիւն եւ պակաս ինչ եւ կամ այլատարազ եղեւ, աղաչեմ շինել մեղադիր, զայս գիտելով, թէ ոչ ի ծուլութենէ կամ յանփոյթ առնելոյ եղեւ, այդ յանհուսութենէ հատակոտոր թարգմանելոյն: Բայց ըստ իս ոչինչ պակասեցուցեալ ի ճշմարտութենէ, ուստի եւ զսխալանսն անտես առնել Աստուծոյ եղբայրական սիրով զիջեալ ըստ իս, աղաւթեցէք ի վերայ վշտացելոյս, ներքին եւ արտաքին պատերազմաւք:

Արդ եւ զանգիւտ Հայկազանցս զլուսաւոր մարգարտիս զպատճառն զերանելի Լուսաւորչին մերոյ զփոխանորդ զԳրիգորիս, զհոգեւոր հայր մեր եւ զխնամածու յիշեցէք ի Տէր, վասն զի նա եղեւ սկիզբն զսուրբ Աւետարանիս Մեկնութիւնս գրելոյ ի գիրս յայս, ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն զերանելին, որ եւ լուեալ ինձ ըստ աստուածասէր եւ պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յասուրւոյն լեզուէ, եւ քանզի շաղփափ այլատարազ գոյ լեզուն ասորի ի մերս Հայկազանց արամեանս ազգ եւ լեզու, ըստ որում վերստին իմ աղաչանս ի ձեռն առեալ վկայասէր ոգւոյ, ի յունականէ առնել զթարգմանութիւն զերահրաշ ճառիցս եւ աստուածախաւս բանիցս, աստուածաբան աւետարանիչս Յովհաննու Մեկնութեան, ի ձեռն հոմանուն երանելի պատրիարգին Կոստանդնուպաւլիսի, տիեզերակեցոյց աշխարհալոյս վարդապետի, Ոսկեբերանն կոչեցելոյ մականունութեամբ, որպէս վերագոյնդ առ նա արարեալ իմ Կիրակոսի զբանս մաղթանաց, վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեանն:

Արդ ունկնդիր եղեալ ինձ թողեալ զԱնդրէաս երէց ասորի զթարգմանիչ, յղէ ի Միսապաւտամն գաւառ առ յունականն հոետոր Թէոփեստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պոտոյնաւտար իշխանին Առան կոչեցելոյ, եւ բազում ծախիւք առատատուր պարգեւաւք նմա ետ թարգմանել զսուրբ գիրսս: Եւ արդ, նա ի Քրիստոս փոխեալ երանելի կեանսն, բազում ճառք մնացին անթարգման, յոր ես ձեռնարկեալ նոյնպէս առատաբար ձրիւք զմնացեալսն ետու ավարտել նմին առն:

⁴⁰ Բաբգեն արքայակից կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Դալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 527:

Եւ է ճառիցս թիւ, զոր նորոգի ի յայտ ածաք, յիսուն եւ հինգ ճառ, քանզի զերեսուն եւ զերիսն բազում յուղիւք առաջին մերոյ թարգմանչացն գտաք թարգմանեալ: Ի սկզբանն տասն եւ երեք ճառ յասորի լեզուէ, բանքն իսկ ցուցանեն: Իսկ քսան ի յունականէն, որ են երեսուն եւ երեք ճառ: Բովանդակն էր լեալ զինքն թարգմանած ի հայս, եւ ի ծուլութենէ եւ յանփոյթ առնելոյ, այլքն կորուսեալ եղծեալ էին յարինակս հինս, ուր եւ կայր, եւ այս, զոր գտաք ի յախմար եւ ի տգէտ խաւարած գրագրերոյ այլայլած եւ թիրած էր բանքն եւ տուրքն եւ աւելի եւ պակաս, անաւարտ ի կարգալոյ եւ յիմանալոյ, զոր իմ Կիրակոսի տիպի և անարժանի ի ձեռն առեալ ուղիղ յարինեցի ըստ կարի, այլ ըստ մտաց բանիցն եւ այլ ի կրկին արինակաց, եւ ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում ջանիւ եւ աշխատութեամբ յերիւրնեցաք յուղիղն բառ եւ բանս ըստ մերումս զհատակոտոր եւ զխրթին բանսն, եւ ըստ վերագոյն գրելոցն ոչ աւելի եւ ոչ պակաս»⁴¹:

Գրիգոր Վկայասերը Ոսկեբերանի Հովհաննու Ավետարանի մեկնության թարգմանությունը՝ սկսած 33-րդ ճառից, պատվիրում է Կիրակոս Դրազարկեցու խնդրանքով, քանի որ հայերեն տարբերակն ամբողջական չէր, և, ինչպես նշում է Կիրակոսը, «ի ծուլութենէ եւ յանփոյթ առնելոյ, այլքն կորուսեալ եղծեալ էին յարինակս հինս»: Հավանաբար, չգտնելով մեկնության հունարեն բնագիրը, կաթողիկոսը երկը նախ ասորերենից թարգմանել է տալիս ասորի երեց Անդրեասին, սակայն, Կիրակոսը, գիտակցելով ասորերենից կատարված թարգմանությունը խմբագրելու բարդությունները, համոզում է Վկայասերին դիմել Թեոփիստին, որն էլ առատ վարձատրություն է ստանում այս աշխատանքն իրականացնելու համար: 1105 թ. Գրիգոր Վկայասերի մահվանից հետո գործը կիսատ է մնում, և Թեոփիստեն դադարում է թարգմանել աշխատությունը: Կիրակոսը ստիպված է լինում սեփական միջոցներով վարձատրել հույն հեատորին՝ թարգմանությունն ավարտին հասցնելու նպատակով⁴²: Հիշատակարանից երևում է, որ աշխատությունը խմբագրելիս Կիրակոսն, ինչպես Ոսկեբերանի Գործք Առաքելոցի մեկնության թարգմանությունը խմբագրելու դեպքում, այս անգամ էլ ձեռքի տակ չունեի հունարեն բնագիրը. սա հաստատում է հետևյալ հատվածը՝ «չանացի յերիւրել միայն, ոչ յաւելուլ եւ ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն: Իսկ եթէ ի վերս գուրով սորայս մակացութիւն եւ պակաս

⁴¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 148-149: Նաև՝ Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 309-320:

⁴² Ն. Ակիմեան, «Կիրակոս վ. Գիտնական», էջ 510: Նաև Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 622: Հմմտ. Գ. Մուրադեան, Գրիգոր Բ Վկայասեր (ՄՀ, ԺԷ. հատոր, ԺԱ. դար), Երևան, 2016, էջ 82:

ինչ եւ կամ այլատարազ եղեւ, աղաչեմ չլինել մեղադիր, զայս գիտելով, թէ ոչ ի ծուլութենէ կամ յանփոյթ առնելոյ եղեւ, այդ յանհուսութենէ հատակոտոր թարգմանելոյն: Բայց ըստ իս ոչինչ պակասեցուցեալ ի ճշմարտութենէ»: Այսինքն՝ իր առջև միայն խրթին թարգմանությունն ունենալով, Կիրակոսը փորձել է այն խմբագրել ու համապատասխանեցնել հայերենի լեզվաոճական կանոններին՝ խնդիր դնելով խուսափել իմաստային փոփոխություններից:

Հիշատակարանում որոշ տեղեկություններ են պահպանվել նաև Թեոփիստեի մասին: Վերջինս Միջագետքի Խոզնագավառ և Մեծկերտ գավառների քաղկեդոնական հայ իշխան Առոնի (Ահարոն) «քարտուղար և պատոյնաւտար»-ն էր: Այս իշխանի հանձնարարությամբ, 1101 թ. Թեոփիստեն հեղինակում է դավանաբանական բնույթի թուղթ՝ ուղղված Սասունի իշխան Չորտվանելին՝ նրան դավանափոխ անելու նպատակով⁴³: Չորտվանելն էլ իր հերթին դիմում է Մշո Առաքելոց վանքի նշանավոր վանահայր Պողոս Տարոնացուն և հանձնարարում պատասխան թուղթ գրել: Ուշագրավ է, որ Թեոփիստեն իր թղթում հայերին մեղադրել է հունարենից թարգմանություններ իրականացնելու մեջ. «Ասէք թէ Հայք ի Հոռոմոց գիրս թարգմանեն եւ ուսանին, եւ այդ ձեզ չէ պատիւ»⁴⁴: Այս մեղադրանքին ի պատասխան Պողոս Տարոնացին նշում է, թե հայերը միայն հունարենից չէ, որ թարգմանություններ են իրականացրել. «Բազում գիրք կան ի Հայք, եւ Հոռոմք ոչ թարգմանեն վասն ծուլութեան եւ հպարտութեան: Մեք յԱսորոց եւ յԵգիպտացոց, ի Հոռոմոց եւ ի Յունաց թարգմանեմք... Այսպէս Հայք յամենայն վատթարաց հաւաքեն զպիտանին, եւ զխոտանն մերժեն»⁴⁵:

Այսպես, Գրիգոր Վկայասերը որոշ գրվածքներ թարգմանելու նպատակով դիմում է հույն հայերենագետներին, որոնց մատուցած ծառայության համար առատորեն վարձատրում է, իսկ հայ վարդապետներն այնուհետև վերամշակում են թարգմանված երկերը: Սակայն ո՞րն էր թարգմանական այս մեթոդին դիմելու դրդապատճառը. ա. արդյոք խնդրո առարկա երկերի հունարեն բնագրերը ձեռք բերելու բարդությունը կարող էր շարժառիթ հանդիսանալ, քանի որ հույները կարող էին թույլ շտալ հայերին օգտվել որոշ դավանաբանական բնույթի ձեռագրերից, որոնք հայերին կօգնեին պաշտպանվել քաղկեդոնականության դեմ պայքարում, բ. թե՞ բնագրին հնարավորինս մոտ թարգմանություն ստանալն էր:

Թարգմանական վերոհիշյալ մեթոդը Կիլիկյան Հայաստանում շարունակ-

⁴³ Հ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի (Առաքելոց վանքի գրչության դպրոցը), էջ 24-25:

⁴⁴ Մ. Է. Շիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների վաղդատություններ), Երևան, 2005, էջ 113:

⁴⁵ Նույն տեղում, էջ 113-114:

վում է կիրառվել նաև հետագա դարերում: Օրինակ՝ Ներսես Շնորհալին սրբագրում է Աբրահամ Ղուամատիկոսի՝ հունարենից հայերեն թարգմանած Հովհան Ոսկեբերանին վերագրված ներբողը՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին. «Ի թուականիս ՇՂ (1141) թարգմանեցաւ ճառս ի յունականէն ի մերս, ի ձեռն Աբրահամու Ղուամատիկոսի, ի հին եւ եղծած արինակաց, իսկ յարմարեցաւ ըստ բանից գրութեան եւ բառի յիմոյ նուաստութենէ Ներսէսէ, հրամանաւ տեառն իմոյ ու հարազատի Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, եւ Ստեփաննոսի գրչի»⁴⁶: Ներսես Լամբրոնացին հույն Կոստանդին Հերապոլսեցուն թարգմանել է տալիս Հովհաննու Հայտնության մեկնությունը, որն այնուհետև անձամբ է սրբագրում⁴⁷:

Գրիգոր Վկայասերին իր գործակիցներին՝ Գեորգ Լոռեցու, Կիրակոս Դրագարկեցու և Գեորգ Մեղրիկի հետ միասին, հաջողվում է ոչ միայն հարստացնել հայ եկեղեցական մատենագրությունը, այլև Կիլիկիայում հիմնել գիտակրթական կենտրոններ⁴⁸, որոնք հիմք հանդիսացան գիտական մտքի զարգացման համար: Հետագայում հենց այս ուսումնագիտական կենտրոններում կրթություն են ստանում մի շարք ականառու եկեղեցական գործիչներ՝ ինչպես օրինակ Ստեփանոս Մանուկը, Իգնատիոս Սևեռնցին, Գրիգոր Պահլավունին, Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին և այլք⁴⁹: Հետաքրքրական է, որ Ստեփանոս Մանուկին վերաբերող հիշատակարանում Կիրակոս Դրագարկեցին և Գեորգ Մեղրիկը կոչվում են «զգլխաւոր վարդապետքն»՝ հավանաբար ուսուցչապետ իմաստով⁵⁰. «Իսկ կաթողիկոսն առնու ընդ իւր վարդապետս և եպիսկոպոսունս, և այլ եւս ոմանս յիշխանացն և յընտիր տանուտէրացն և գայ յողջոյն իշխանաց իշխանին

⁴⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 161: Նաև՝ **Ղ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 268: Ներբողի համառոտ տարբերակի վերլուծությունը և բնագիրը տե՛ս **Գ. Մուրադյան**, «Հովհան Ոսկեբերանին վերագրված «Հրաշալի է մեզ տաւնս այսաւր եվ պայծառագոյն» սկզբածով Գրիգոր Լուսավորչի ներբողը (Ներսես Շնորհալու խմբագրմանը նախորդած՝ Համառոտ տարբերակ)», *ԲՄ*, 31, 2021, էջ 262-297: Ըստ **Գ. Մուրադյանի**՝ «... Համառոտ կարող է լինել Շնորհալու պատվիրած թարգմանությունը, իսկ ընդարձակը՝ նրա խմբագրած տարբերակը» (նույն տեղում, էջ 265): Նրա կարգում՝ ընդարձակ խմբագրության ֆինական բնագիրը (ինչպես և Շնորհալու պատվերով թարգմանված ևս 4 երկ) տե՛ս Մատենագիրք հայոց, ԻԲ հատոր, ԺԲ դար, Ներսէս Շնորհալի, գիրք Բ, Երևան, 2022, էջ 761-806: Շնորհալու խմբագրած բոլոր հինգ թարգմանությունները տե՛ս անդ, էջ 689-927:

⁴⁷ Մանրամասն տե՛ս **Ա. Բոզոյան**, «Այլագրի թարգմանիչները հայ մատենագրության մեջ», էջ 278-279:

⁴⁸ **Լ. Խաչերեան**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները միջնադարեան Հայաստանում և Կիլիկիայում (V-XVI դդ.), հ. 2, Լիպպոն, 1998, էջ 240-282: Նաև տե՛ս **Ա. Ղազարոսյան**, «Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը. Սև լեռան և Դրագարկի գրչության կենտրոնը», էջմիածին, 2008, օգոստոս, էջ 68-70:

⁴⁹ **Է. Մ. Շիրինյան**, «Դպրությունը Կիլիկյան Հայաստանի Սև լեռան հայկական վանքերում», էջ 353:

⁵⁰ **Լ. Խաչերեան**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, հ. 2, էջ 364-365:

Վասիլ, ունելով ընդ իւր զգլխաւոր վարդապետսն զՄեղրիկ Սեւանեցին, որ զԴրագարկի սահմանն է կարգաւորեալ, և զԿիրակոս, շատ տօնս և յիշատակս սրբոց ի մարտի[ր]ողոքս ճաշագրոցն է յաւելեալ»⁵¹:

Այսպիսով, Գրիգոր Վկայասերը 1075/1076 թթ. Կոստանդնուպոլսում մեկնարկում է արգասավոր թարգմանական գործունեութուն, որի նպատակն էր Բագրատունյաց թագավորության անկումից հետո ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմաններում փորձել պաշտպանել Հայոց եկեղեցին բյուզանդական ոսնձգություններից՝ հարստացնելով եկեղեցական մատենագրությունն ու Կիլիկիայում հիմնելով ուսումնագիտական կենտրոններ: Կաթողիկոսը որոշ երկեր թարգմանելու նպատակով դիմում է օտարազգի հայերենագետներին, որոնք առատ վարձատրության դիմաց իրականացնում են այդ աշխատանքը. նախ օտարազգի թարգմանիչը բնագիրը բառացի վերածում էր հայերենի, այնուհետև տեքստը «վերստին արծարծում» էր Վկայասերի աշակերտներից կամ գործակիցներից մեկը: Կարծում ենք, հայ մատենագրության մեջ հանդիպող թարգմանական այս եղանակը կարիք ունի համապարփակ ուսումնասիրության, որը թույլ կտա ավելի լավ պատկերացում կազմել այս եղանակի կիրառման շարժառիթների մասին:

DAVIT GEVORGYAN

THE TRANSLATIONAL MOVEMENT INITIATED

BY GRIGOR II VKAYASER

Keywords: Grigor II Vkasaser, Kirakos Drazarkets'i, Byzantine empire, Cilicia, Constantinople, ecclesiastical relations, monasteries of the Black mountain, translational activity, educational centers.

In 1075/1076 Grigor Vkasaser (Martyrophil) started a prolific translational activity, trying to protect the Armenian Church from Byzantine encroachments, when a new geopolitical situation was created after the fall of the Bagratuni kingdom of Armenia. He enriched Armenian ecclesiastical literature, and with the help of his associates, established educational centers in Cilicia. For translating some writings, Grigor Vkasaser involved foreign translators generously paying them for their work. They translated the original Greek text verbatim into Armenian, and then the text was revised by an Armenian erudite. This method of translation requires a thorough study in order to gain a better understanding of the reasons for its use.

⁵¹ Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 305: Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժԲ դդ., էջ 171:

ДАВИД ГЕВОРГЯН

ПЕРЕВОДЧЕСКОЕ ДВИЖЕНИЕ, НАЧАТОЕ
ГРИГОРОМ II ВКАЯСЕРОМ

Ключевые слова: Григор II Вкаясер, Киракос Дразаркеци, Византийская империя, Киликия, Константинополь, церковные взаимоотношения, монастыри Черной горы, переводческая деятельность, образовательные центры.

В 1075/1076 г. Григор Вкаясер (Мартирофил) начал плодотворную переводческую деятельность, пытаясь защитить Армянскую церковь от византийских посягательств, когда после падения Армянского царства Багратидов создалась новая геополитическая ситуация. Он обогатил армянскую церковную книжность и с помощью своих единомышленников основал образовательные центры в Киликии. Для перевода некоторых произведений Григор Вкаясер обращался к иностранным переводчикам, щедро оплачивая их труд. Они дословно переводили оригинальный греческий текст на армянский, после чего текст редактировали армянские вардапеты. Этот метод перевода требует тщательного изучения, дабы лучше понять причины его использования.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցին և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակներ
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ՔԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмяляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян	233
Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения.....	
Лусине Туманян	268
Гандзы и таги Ованеса Бргутенца	
Асмик Киракосян	295
Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши.....	
Мигран Минасян	305
Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.).....	

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян	321
Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах.....	
Татевик Манукян, Кнарик Саргсян	330
Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина).....	
Эрмине Григорян	350
Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне.....	

ДИСКУССИЯ

Нарине Варданян	377
История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов?	

СООБЩЕНИЕ

Манса Эрна Ширинян	420
XXIV всемирный конгресс византинистов.....	

НЕКРОЛОГ

Назени Гарибян	432
Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022).....	

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/